

## Տ. ԱԲԳԱՐ ԱԲԵՂԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Ծնվել է 1972 թ. հուլիսի 23-ին Բաթումի քաղաքում, ավազանի անունը՝ Սամվել:

1979–1989 թթ. սովորել և ավարտել է տեղի Ստեփան Շահումյանի անվան հմր. 12 հայկական միջնակարգ դպրոցը:

1989 թ. ընդունվել և 1995 թ. ավարտել է Հոգևոր ճեմարանը, ավարտաճառի թեման է՝ «Հայ դավանաբանական մտքի արձագանքները Ներսես Շնորհալու Մատթեոսի Ավետարանի մեկնության մեջ»:

1995 թ. հոկտեմբերի 22-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Անանիա եպս. Արաբաջյանի:

1996 թ. հունիսի 2-ին Մայր Աթոռում, ձեռամբ Տ. Շահե արքեպս. Աճեմյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա: